

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Վարկային գործառնությունների գլխավոր պայմանագրերի կնքման վճար | – 25'000 ՀՀ դրամ՝ մինչև 15'000'000 ՀՀ դրամ գնահատված (իրացվելիք արժեք ունեցող գրավների համար, միանվագ – 50'000 ՀՀ դրամ՝ 15'000'001 և ավել ՀՀ դրամ գնահատված (իրացվելիք արժեք ունեցող գրավների համար, միանվագ |
| 2 | Գույքի ապահովագրման և ապահովագրական հատուցման կարգի վերաբերյալ դրույթների չպահպանման կամ ոչ լիարժեք կատարման համար տուգանք | 25'000 ՀՀ դրամ՝ միանվագ (Բանկի պահանջով) |
| 3 | Գրավի պայմանագրով ստանձնած պարտավորությունների այլ խախտումների համար՝ յուրաքանչյուր խախտման համար տուգանք | 25'000 ՀՀ դրամ (Բանկի պահանջով) |
| 4 | Ֆինանսական և այլ հաշվետվությունների և տեղեկանքների չներկայացման դեպքում տուգանք | 25'000 ՀՀ դրամ՝ միանվագ (Բանկի պահանջով) |
| 5 | Գրավադրված գույքը պատշաճ կարգով բանկին չհանձնելու դեպքում տուգանք | 500'000 ՀՀ դրամ (Բանկի պահանջով) |
| 6 | Վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունների այլ խախտումների համար՝ յուրաքանչյուր խախտման համար տուգանք | 25'000 ՀՀ դրամ (Բանկի պահանջով) |
| 7 | Փոխադարձ համաձայնությամբ լրացուցիչ գրավների ձևակերպումից, կամ գրավի արժեզրկման հետ կապված վարկի վաղաժամկետ մարումից հրաժարվելու կամ լրացուցիչ գրավ չձևակերպելու դեպքում | 100'000 ՀՀ դրամ (Բանկի պահանջով) |

Վարկային գծի կամ օվերդրաֆտի գծով հիմնական գումարի ժամկետանցում թույլ տալու դեպքում տվյալ օրվանից դադարեցվում է վարկային գծի կամ օվերդրաֆտի գործողությունը, իսկ վերը նշված պարտավորությունները վերաձևակերպվում և սպասարկվում են որպես սովորական վարկ:

Հայտի բավարարման վերաբերյալ որոշման կայացման օրվանից 25 բանկային օրվա ընթացքում Վարկը, երաշխիքը, ակրեդիտիվը չձևակերպելու դեպքում անհրաժեշտ է համապատասխան մարմնի կրկնակի թույլտվությունը:

Այն դեպքում, երբ վարկը ենթակա է վերաֆինանսավորման Բանկի հետ համապատասխան պայմանագիր կնքած ընկերության միջոցների հաշվին կամ տրամադրվում է այդ պայմանագրերի շրջանակներում, սույն պայմանները գործում են այնպես, որքանով չեն հակասում Բանկի և այն ընկերությունների միջև կնքված պայմանագրերի դրույթներին: